



State of California—Health and Human Services Agency
Department of Health Care Services



«Տարեց, կույր և հաշմանդամ անձանց չքավորության դաշնային մակարդակի ծրագրի» շրջանակների ընդլայնում

Կարևոր նորություն Ձեր առողջության ապահովագրության վերաբերյալ

Հարգելի նպաստառու

Մենք լավ լուր ունենք Ձեզ համար:

California-ում նոր օրենք է ընդունվել: Այն կարող է փոխել «Medi-Cal»-ի Ձեր նպաստները: Հնարավոր է, որ շուտով Դուք բավարարեք անվճար «Medi-Cal»-ում ընդգրկվելու պահանջները:

Սկսած **2020 թ. դեկտեմբերի 1-ից**, California-ի նոր օրենքը բարձրացնում է «Տարեց, կույր և հաշմանդամ անձանց չքավորության դաշնային մակարդակի ծրագրի» ամսական եկամտի մակարդակը: Դա նշանակում է, որ ավելի շատ դիմորդներ և նպաստառուներ իրավունակ կլինեն անվճար «Medi-Cal» ստանալու:

Ի՞նչ կկատարվի դրանից հետո

Ներկա պահին «Medi-Cal»-ի Ձեր նպաստները չեն փոխվի: Այժմ Ձեզնից ոչինչ անել չի պահանջվում: Կարիք չկա «Medi-Cal»-ի նոր դիմում ներկայացնելու: Առաջվա նման՝ Ձեր «Medi-Cal»-ն ամեն տարի կթարմացվի: Եթե Դուք փոստովանդամագրումը թարմացնելու փաթեթ ստանաք, լրացնեք այն: Պահանջվող ապացույցների հետ միասին ուղարկեք այն Ձեր շրջանին:

Եթե ներկայումս Դուք «Medi-Cal»-ում եք ընդգրկված և ստանաք այս նամակը, ապա կստուգվի, թե արդյոք Դուք բավարարում եք նոր օրենքի պահանջները: Եթե Դուք իրավունակ ճանաչվեք անվճար «Medi-Cal»-ի համար, Դուք փոստով նամակ կստանաք: Նամակում կասվի փոփոխության մասին:

Փոփոխության մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք այս նամակի հետ ուղարկված «Հաճախ տրվող հարցերը» (ՀՏՀ-ները): Դուք կարող եք Ձեզ համար մատչելի ձևաչափով պահանջել նյութերը: Նյութերը կարող են

Ձեզ տրամադրվել Բրայլի գրատիպով, խոշորատառ տպագրությամբ, ձայնագրված կամ տվյալների սկավառակով կամ, անհրաժեշտության դեպքում, որևէ այլ ձևաչափով:

Հարցերի դեպքում

Եթե հարցեր ունեք, կամ եթե Ձեզ օգնություն կամ բանավոր թարգմանության ծառայություններ են հարկավոր, գանգահարեք «Medi-Cal»-ի Օգնության հեռախոսագիծ՝ 1-800-541-5555 (TTY 1-800-430-7077) հեռախոսահամարով: Զանգն անվճար է: Կամ մեզ էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկեք՝ ABDexpansion@dhcs.ca.gov հասցեով:

Շնորհակալություն,
Department of Health Care Services